Ղուբայի	2,500	13,000	7,0	5,2
Լենքորանի	11,000	84,700	9,2	7,7
Շամախու	500	15,000	26,2	30,0
բոլորը	14,810	136,100	9,0	9,1

Այսպէս բրնձի պտղաբերութիւնն եղել է այնքան, որքան և նախընթաց տարում, բայց քիչ ցանելու պատճառով, բրնձի հնձի քանակութիւնն էլ պակաս է 121,700 չեմվերտով, կամ 47,2%, քան անցեալ 1890 թուինը։ Բրնձի ցանքսերի պակասումը կարելի է բացատրել անցեալ տարիների օրինակներով, որոնք ցոյց տուին, որ ջրի պաշարին ոչ համապատասխան բրինձի ցանքսերի չափազանց աւելացնելն առաջացնում է մեծամեծ վնասներ, կանաչը չորանալու պատճառով։

ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆ

Գարնանացան ցորենը մշակվում է միայն երեք գաւառի լեռնոտ մասերումն.—Գեօկչայի, Ղուբայի և Շամախու, այն եւս աննշան քանակութեամբ։

Գաւառները	Ցանուած է չեմվերտ	Հնձուած է չեմվերտ	Պտղաբերութիւն 1890 թ.	1891 թ.
Գեօկչայի	1,300	7,100	5 0	2,8
Ղուբայի	5,100	14,200	4,5	5,4
Շամախու	900	2,800	5,7	3,1
բոլորը	7,600	24,100	4,7	3,2

ԿՈՐԵԱԿ

Ո՛չ պակաս նշանաւոր դեր է խաղում գիւղական տնտեսագիտութեան մէջ և կորեակը, որ բոլորովին չեն ցանում միայն Բագուայ գաւառում։